

## Նմուշ\* CapsoCam Plus® Նախապատրաստման հրահանգներ

\*Հրահանգները տրվում են բժիշկներին որպես օրինակ՝ հիվանդի նախապատրաստման համար, ինչը, հավանաբար, պետք է ապահովի բարակ աղիքի մաքուր լինելը և բուժակարգի բարեհաջող արդյունքը: Յուրաքանչյուր հիվանդի անհատական վիճակը պետք է հաշվի առնվի բժշկի կողմից՝ նախապատրաստման հրահանգներ հաստատելիս: Աղիների գործունեության հայտնի խնդիրներ (օրինակ՝ ստամոքսի դատարկման ուշացում կամ բացակայություն, հաճախակի փորկապություն, կոլոնոսկոպիայի ժամանակ դժվար հասանելիություն և այլն) ունեցող հիվանդները կարող են ավելի լուրջ կամ փոփոխված նախապատրաստման պլանի կարիք ունենալ:

Այս նախապատրաստման պլանը մշակվել է բժիշկների և իրենց հիվանդների կողմից՝ հասնելու համար երեք հիմնական վերջնարդյունքի. (1) բարակ աղիքի օպտիմալ վիզուալիզացիա, (2) պարկուճի հնարավոր արագ անցում և (3) հնարավորինս թույլ կղանք՝ դուրս բերումը ավելի դյուրին դարձնելու և պարկուճային էնդոսկոպիայի հետազոտության կլինիկական արդյունքը Ձեր հիվանդի համար առավելագույնի հասցնելու նպատակով:

# Հիվանդի նախապատրաստման հրահանգները՝ CapsoCam Plus®-ով պարկուճային էնդոսկոպիայի համար

## Առավոտյան ընդունելու նշանակում

\*ՆՇՈՒՄ. Եթե խմելու միջոցով երկաթի հավելումներ եք ընդունում, խնդրում ենք դադարեցնել հետազոտությունից 4 օր առաջ:

Ձեր պարկուճային էնդոսկոպիայի բուժակարգի անցկացման տվյալներն են. \_\_\_\_\_

Հասցե՝ \_\_\_\_\_

Օր՝ \_\_\_\_\_ Ամսաթիվ՝ \_\_\_\_\_ Ժամ՝ \_\_\_\_\_


### Բուժակարգին նախորդող օրը

Օր.	Նախաճաշին նորմալ կերեք, ապա թեթև ճաշեք: Այնուհետև սկսեք պարզ հեղուկներ ընդունելու դիետան՝ բուժակարգից առաջ փասցած օրվա/գիշերվա ընթացքում: (Կարմիր գույնի որևէ բան չխմել):
Օր. Ժամ՝ 19:00	Խառնեք յոթ (7) պարկուճ (119 գրամ) պոլիէթիլեն գլիկոլ (MiraLAX®, ClearLax, PureLax, GaviLax, LavaClear ապրանքանիշեր) 32 ունցիա ջրով կամ ոչ կարմիր էլեկտրոլիտներով հագեցած փոխարինող հեղուկով և խմեք ամբողջը:
Օր. Ժամ՝ 21:30	Երեկոյան ժամը 21:30-ին խմեք 0,6 մլ Mylicon®-ի կաթիլներ՝ լուծված 8 ունցիա ջրում: Մա կնվազեցնի փքվածությունը ստամոքսաղիքային տրակտում: Ժամը 22:00-ից հետո ոչինչ մի խմեք: Դեղահաբերի հետ թույլատրվում է փոքր կումերով ջուր խմել:

### Բուժակարգի օրը

Օր. Ժամ՝ Առավոտյան	Մի ընդունեք դեղորայք պարկուճը կուլ տալուց հետո 2 ժամվա ընթացքում, քանի դեռ Ձեր բժիշկը դա անհրաժեշտ չի համարում, այնուհետև կարող եք դեղահաբերի հետ փոքր կումերով ջուր խմել:
Օր. Ժամ՝	Պարկուճը կուլ տալու նշված ժամանակից երկու (2) ժամ առաջ խառնեք 1 չափաքանակ (17 գրամ) պոլիէթիլեն գլիկոլը (MiraLax, ClearLax և այլն) մեկ լիքը բաժակ ջրում կամ ոչ կարմիր էլեկտրոլիտ պարունակող փոխարինող ըմպելիքի մեջ: Պոլիէթիլեն գլիկոլի 22ի կափարիչը չափիչ աման է, որը տեղավորում է 17 գրամ փոշի, եթե լցնում եք մինչև նշված գիծը:
Օր. Ժամ՝	Ժամանեք գրասենյակ/կլինիկա:
Ժամ՝	<b>Կուլ տվեք CapsoCam Plus պարկուճը</b> 0,6 մլ Mylicon կաթիլներով՝ լուծված 8 ունցիա ջրի մեջ:
Ժամ՝	Կրկին սկսեք խմել պարզ հեղուկները պարկուճը կուլ տալուց 2 ժամ հետո:
Ժամ՝	Պարկուճը կուլ տալուց չորս (4) ժամ հետո խառնեք 17 գրամ պոլիէթիլեն գլիկոլը (MiraLax, ClearLax և այլն) մեկ լիքը բաժակ ջրում կամ ոչ կարմիր էլեկտրոլիտ պարունակող փոխարինող ըմպելիքի մեջ, խմեք ամբողջը:
Ժամ՝	Պոլիէթիլեն գլիկոլի (MiraLax, ClearLax և այլն) վերջին չափաբաժինը խմելուց հետո ցանկացած ժամանակ կարող եք թեթև ճաշել: Խնդրում ենք գրանցել, թե ինչ եք կերել ճաշի ընթացքում:  _____
	Ընթրիքին սովորականի նման կերեք: Այլևս դիետայի լրացուցիչ սահմանափակումների կարիք չկա:

## Կարևոր տեղեկատվություն հիվանդների մասին

- Լավագույն արդյունք ստանալու համար խստորեն հետևեք հրահանգներին: Պարկուճը սովորաբար դուրս է գալիս 3-30 ժամում: Եթե պարկուճը դուրս չի եկել ընդունելուց 72 ժամ հետո, դիմեք Ձեր բժշկին:
- Դուրսբերման տեսագրվածհրահանգները դիտելու համար այցելեք <https://capsovision.com/patient-resources/what-to-expect-with-capsocam/> 
- Այս հետազոտության կրկնությունից խուսափելու համար խնդրում ենք հետևել դուրս բերման հրահանգներին, քանի դեռ պարկուճը դուրս չի եկել: Շարունակեք կիրառել դուրս բերման տրամադրված պլանը, քանի դեռ պարկուճը դուրս չի եկել:
- Վերադարձեք պարկուճը Ձեր բժշկին, ինչպես ցուցված է:

## Պարկուճի վերադարձը. Ձեր Առողջապահության մատակարարի կողմից ընտրված 2 տարբերակներից 1-ը

- Եթե Ձեզ տրամադրվել է նախապես կնքված լիցքավորված ծրար Ձեր տան համար նախատեսված հավաքածուի հետ, ապա պարկուճը դրեք պարկուճի համար նախատեսված տարայի մեջ: Համոզվեք, որ պարկուճի տարայի կափարիչը փակ է, պարկուճի տարան դրեք փակվող տոպրակի մեջ և փակեք այն: Տեղադրեք պարկուճի տարայով փակվող տոպրակը ծրարի մեջ, փակեք ծրարը և այն թողեք FedEx-ի որևէ արկղիկում կամ FedEx-ի որևէ գրասենյակում:
- Տեղադրեք պարկուճը պարկուճի համար նախատեսված տարայի մեջ: Համոզվեք, որ պարկուճի տարայի կափարիչը փակ է: Պարկուճը վերադարձրեք բժշկի գրասենյակ գործող աշխատանքային ժամերին:

Խնդրում ենք զանգահարել մեր գրասենյակ հետևյալ հեռախոսահամարով՝ \_\_\_\_\_, եթե ունեք հարցեր:

## Նախապատրաստական դեղամիջոցների գնում

**Նշում.** Նախապատրաստական դեղամիջոցները լինում են տարբեր չափերի. Նախապատրաստական դեղամիջոցները գնելիս համոզվեք, որ այն բավարար կլինի նախապատրաստման ամբողջ ընթացքի համար:

Պոլիէթիլեն գլիկոլ (MiraLAX®, ClearLax, PureLax, GaviLax, LavaClear ապրանքանիշեր): Գնեք տարա(ներ), որի պարունակությունն առնվազն 153 գրամ է (հավանաբար, Ձեզ մոտ մի քիչ ավել տեղ կ'մնա):

Mylicon կաթիլներ՝ հնարավոր ամենափոքր շիշը... ընդհանուր առմամբ Ձեզ անհրաժեշտ է լինելու ընդամենը 1,2 մլ: